

## «Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» ծրագրի Դրույթներ և պայմաններ

### Տեղեկատվական թերթիկ դիմորդի համար

Վերջին թարմացումը՝ 2025թ. Մեպտեմբերի 15

«Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» (ՁԱՌ) ծրագիրն իրականացվում է Հայաստանի ամերիկյան համալսարանի [Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի](#) կողմից՝ [«Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման» ծրագրի \(ԹԳՀԶԾ\)](#) հետ համագործակցության արդյունքում: Այն նպատակ ունի օգնել առողջապահության ոլորտի ձեռներեցներին հիմնել կամ ընդլայնել իրենց մասնավոր գործունեությունը՝ այդպիսով բարձրացնելով որակյալ ծառայությունների հասանելիությունը մարզային փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում:

#### Դիմելու ընթացակարգը

ՁԱՌ ծրագրին կարող են դիմել ինչպես առողջապահության ոլորտի մասնագետները (բժիշկներ, կլինիկական օրդինատուրայի ուսանողներ, առողջապահական ոլորտի այլ աշխատակիցներ), այնպես էլ անհատները, ովքեր առողջապահության ոլորտում կրթություն չունեն, սակայն մատուցում են կամ ցանկանում են մատուցել առողջապահական ծառայություններ:

ՁԱՌ ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց դիմում-հայտ <https://eih-trdp.aua.am/apply-now/> կայքում, որտեղ հարկավոր է նկարագրել առաջարկվող ծառայության տեսակը, ընտրված տարածաշրջանը, հիմնավորել առաջարկված ծառայության անհրաժեշտությունը տվյալ տարածաշրջանի համար, և ներկայացնել, թե արդյո՞ք դիմորդը ցանկություն ունի ՁԱՌ ծրագրի աջակցությամբ անհրաժեշտ փուլերն անցնելուց հետո ստանալ ցածր տոկոսադրույքով (5%) վարկ, և եթե այո, նշի նաև իր գաղափարի իրականացման համար ՁԱՌ ծրագրից ակնկալվող

գումարի չափը: ՀԱՀ ՁԱՌ ծրագրի կողմից աջակցություն ստացող հնարավոր ծառայությունների ցանկը ներկայացված է հավելվածում:

Դիմորդի մասնակցությունը ՁԱՌ ծրագրին հիմնված է դիմորդի բիզնես-գաղափարի իրատեսականության և ՁԱՌ ծրագրի նպատակներին համապատասխանության, պահանջված գումարի չափաքանակի և ընտրված տարածաշրջանում առաջարկված ծառայությունների կարիքի գնահատման, դասընթացներին պարտաճանաչ մասնակցության և դրանց մեջ ակտիվ ներգրավվածության, ինչպես նաև (վարկին հավակնելու դեպքում) դիմորդի վարկային պատմության հիման վրա:

### **Կարևոր է՝**

- ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի պահանջել որոշակի նախապայմաններ՝ դիմումը ընդունելու համար (օրինակ՝ տրամադրել նախնական շինության լուսանկարներ):
- ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի դիմորդից պահանջել անձնական տվյալներ և փաստաթղթեր:
- ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի դիմորդից պահանջել իր վարկային պատմության մասին պաշտոնական տվյալներ (ACRA report):
- ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի այցելել առաջարկված ծառայության մատուցման նախնական տարածք, գննել այն, և լուսանկարել:
- ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի կասեցնել դիմորդի հետագա մասնակցությունը ծրագրում՝ վերջինիս կողմից ծրագրի աշխատակիցների կամ այլ մասնակիցների նկատմամբ ոչ պատշաճ վարվեցողության կամ անհարգալից բերաբերմունքի դեպքում:
- ՁԱՌ ծրագիրը պարտավորվում է պահել դիմորդի կողմից տրամադրված ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը և տրամադրել դրանք ցանկացած երրորդ կողմի՝ միայն դիմորդի համաձայնությունը ստանալուց հետո:
- Դիմորդն իրավունք ունի տեղեկատվություն պահանջել իր դիմումի կարգավիճակի մասին՝ դիմումի հանձնման օրվան հաջորդող ամբողջ ժամանակահատվածում:
- Դիմումի մերժման դեպքում դիմորդն իրավունք ունի պահանջել դիմումի մերժման վերաբերյալ լրացուցիչ պարզաբանում:

## ՁԱՌ ծրագրի կողմից ապագա շահառուներին տրամադրվող անվճար դասընթացները

Դիմումի ընդունումից հետո ՁԱՌ ծրագրի շահառու դառնալու համար դիմորդը պարտադիր կերպով պետք է մասնակցի և հաջողությամբ ավարտի «Ձեռնարկատիրական հմտություններ» և «Բուժօգնության որակի կառավարման հիմունքներ» դասընթացները:

Ծրագրի բոլոր փուլերը բարեհաջող ավարտած ձեռներեցներին ՁԱՌ ծրագիրն առաջարկում է նաև «Հաշվապահական հաշվառում առողջապահության ոլորտում» և, եթե դիմորդը ցանկանում է մատուցել ատամնաբուժական ծառայություններ, նաև «Կանխարգելիչ ատամնաբուժություն» դասընթացը:

Նշված բոլոր դասընթացներն անվճար են, իրականացվում են միայն ՁԱՌ ծրագրի դիմորդների և շահառուների համար՝ հայերեն լեզվով, հիմնականում առցանց ձևաչափով՝ կրթական բաղադրիչի ընթացքում առնվազն մի քանի դեմառդեմ հանդիպման պայմանով:

### **Կարևոր է՝**

Մասնակցության վկայական, ինչպես նաև ՁԱՌ ծրագրին մասնակցությունը շարունակելու նախապայմանն է բոլոր դասընթացների ընդհանուր ժամաքանակի առնվազն 70%-ի մասնակցությունը:

Դասընթացների ընդհանուր ժամաքանակի մինչև 30%-ի *հարգելի* բացակայության դեպքում, դասընթացավարի համաձայնությամբ, հնարավոր է լրացնել բաց թողնված դասաժամերը դասընթացից դուրս՝ դեմ առ դեմ հանդիպման կամ տեսահաղորդակցման միջոցով:

«Բուժօգնության որակի կառավարման հիմունքներ» և «Կանխարգելիչ ատամնաբուժություն» դասընթացներն ավարտելուց հետո ՀՀ

Առողջապահության նախարարության կողմից հաստատված ՇՄԶ (շարունակական մասնագիտական զարգացման) կրեդիտներ ստանալու նախապայմանը դասընթացի տևողության 90%-ի մասնակցությունն է:

«Ձեռնարկատիրական հմտություններ» դասընթացի ընդհանուր տևողությունը 60 ժամ է: «Բուժօգնության որակի կառավարման հիմունքներ» դասընթացի ընդհանուր տևողությունը՝ 54 ժամ է: Դասընթացների արդյունքում դիմորդները դասընթացավարների աջակցությամբ կազմում են իրենց գործարար գաղափարի իրականացման գործառնական ծրագրերը, որոնք դասընթացավարների կողմից հաստատվելուից հետո ներկայացվում են փորձագետների խորհրդին՝ շնորհանդեսի (պրեզենտացիա) տեսքով, և հետագայում անցնում է մի քանի փուլ, որտեղ տարբեր մասնագետներ մեկնաբանություններ և խորհուրդներ են տալիս մասնակցին՝ Բիզնես-ծրագիրն ուժեղացնելու հարցում, որոնց հիման վրա էլ մասնակիցը պետք է վերջնականացնի իր Բիզնես-ծրագիրը՝ մշտապես աշխատելով դասընթացավարի և ՁԱՈ մարզային գործունեությունը համակարգողի հետ: Այնուհետև, գործարար գաղափարի իրականացման գործառնական ծրագրերը ներկայացվում են ՁԱՈ գործադիր խորհրդին:

#### **Կարևոր է՝**

- Գործարար գաղափարի իրականացման գործառնական ծրագրերը ՁԱՈ գործադիր կոմիտեին ներկայացվելուց հետո, դրանք կարող են ընդունվել, չընդունվել, կամ ընդունվել որոշակի փոփոխություններ պահանջելուց հետո (օրինակ՝ գումարի չափի փոփոխություն, Որակի ապահովման ծրագրի ցուցանիշների փոփոխություն, և այլ): Ծրագիրը կարող է նաև որոշում կայացնել հնարավորություն տալ դիմորդին օգտվել ծրագրի բոլոր բաղադրիչներից՝ բացառությամբ ֆինանսական աջակցության:

Եթե գործարար գաղափարի իրականացման գործառնական ծրագրերը վերջնականապես ընդունվում են ՁԱՈ գործադիր կոմիտեի կողմից, ապա վարկը վերջնականապես հաստատող կառույցը **ՁԱՈ համագործակցող բանկն է:**

Շահառու դառնալուց հետո ՁԱՈ մարզային գործունեությունը համակարգողի հետ միասին հավաքագրում է վարկի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթը և ներկայացնում բանկին: Բանկի կողմից դրական պատասխան ստանալուց հետո, դիմորդը ստանում է հաստատված գումարի չափով վարկը՝ 1 կամ ավելի մասնաբաժիններով: Ինչպես առաջին, այնպես էլ յուրաքանչյուր հաջորդ մասնաբաժնի տրամադրման համար ՁԱՈ ծրագիրն իրավունք ունի պահանջել որոշակի պայմանների առկայություն (օրինակ՝ անձնական ռեսուրսներն օգտագործելով ներքին հարդարման աշխատանքներ՝ մինչև վարկի առաջին մասնաբաժնի տրամադրումը, կամ առաջին մասնաբաժնով զնված

սարքավորումների առկայություն և գնման անդորագրեր՝ մինչև երկրորդ մասնաբաժնի տրամադրումը):

---

ՁԱՌ ծրագրի դիմորդները դառնում է նույն ծրագրի շահառու՝ նրանց կողմից կազմված Բիզնես գաղափարի իրականացման գործառնական ծրագրի՝ ՁԱՌ գործադիր կոմիտեի կողմից հաստատումից հետո:

ՁԱՌ ծրագիրն իրավունք ունի հրապարակել շահառուի անունը, հակիրճ պատմությունը, ինչպես նաև մատուցվող ծառայության տեսակը և վայրը սկսած իր՝ ՁԱՌ ծրագրի շահառու դառնալու պահից:

ՁԱՌ ծրագրի շահառուները կարող են օգտվել ցածր տոկոսադրույքով վարկ ստանալու, շարունակական մասնագիտական խորհրդատվության, շարունակական մասնագիտական զարգացման,ինչպես նաև սփյուռքում բնակվող և աշխատող հայ բժիշկների հետ համագործակցության և շատ այլ հնարավորություններից:

Ակնկալվում է, որ շահառու դառնալուց հետո մասնակիցները պատրաստակամ կլինեն իրականացնել համայնքակենտրոն առողջապահական ծրագրեր, շարունակաբար կապ պահել ՁԱՌ աշխատակիցների հետ, տրամադրել վերջիններիս կողմից պահանջված լուսանկարներ և/կամ տեղեկատվություն:

Հավելված



Հայաստանի ամերիկյան համալսարանի «Ձեռներեցներ  
արողջապահության ոլորտում» ծրագրով սատարվող բժշկական  
օգնության և սպասարկման ծառայությունների ցանկը

**1. Առաջնային բժշկական օգնություն**

- 1) բժշկական ընդհանուր պրակտիկա
- 2) մանկաբուժական ընդհանուր պրակտիկա
- 3) ընտանեկան բժշկություն
- 4) ընտանեկան ստոմատոլոգիական

**2. Մասնագիտացված բժշկական օգնություն`**

- 1) ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ)
- 2) մանկաբուժական
- 3) գինեկոլոգիական
- 4) նյարդաբանական
- 5) մաշկաբանական
- 6) վեներաբանական
- 7) լաբորատոր-ախտորոշիչ`
  - ա. կլինիկական
  - բ. կենսաքիմիական (բիոքիմիական)
  - գ. բջջաբանական
  - դ. շճաբանական (սերոլոգիական)
  - ե. հյուսվածքաբանական
  - զ. գենետիկական
  - է. մանրէաբանական
  - ը. վիրուսաբանական
  - թ. թունաբանական
  - ժ. մակաբուժական
  - ժա. իմունոլոգիական
  - ժբ. բակտերիոլոգիական
  - ժգ. Սնկաբանական
- 8) ճառագայթային ախտորոշիչ`
  - ա. ռենտգենաբանական
  - բ. ֆլյուորոգրաֆիկ
  - գ. համակարգչային տոմոգրաֆիկ
  - դ. միջուկամագնիսային-ռեզոնանսային
  - ե. մամոգրաֆիկ
  - զ. ռադիոնուկլիդային
  - է. Ուլտրաձայնային
- 9) ֆունկցիոնալ ախտորոշիչ
- 10) ներզննական (էնդոսկոպիական)
- 11) ստոմատոլոգիական ընդհանուր պրակտիկա

3. Նեղ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում՝

- 1) Ալերգոլոգիական
- 2) Անընկալունաբանական
- 3) Թոքաբանական
- 4) Սրտաբանական
- 5) ինտերվենցիոն սրտաբանական
- 6) աղետամոքսաբանական
- 7) երիկամաբանական
- 8) ռևմատոլոգիական
- 9) արյունաբանական
- 10) ներզատաբանական
- 11) վարակիչ հիվանդությունների
- 12) ներզատագինեկոլոգիական
- 13) քիթ-կոկորդ-ականջաբանական
- 14) ակնաբանական
- 15) ուրոլոգիական
- 16) պրոկտոլոգիական
- 17) օրթոպեդիական
- 18) դիմաձևոտային վիրաբուժական
- 19) սեռաախտաբանական (սեքսապաթոլոգիական)
- 20) թերապևտիկ ստոմատոլոգիական
- 21) վիրաբուժական ստոմատոլոգիական
- 22) օրթոպեդիկ ստոմատոլոգիական
- 23) օրթոդոնտիկ ստոմատոլոգիական
- 24) հեմոդիալիզային
- 25) բժշկական-օպտիկական